ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կարիքների համար ավտոմեքենաների
/Ապրանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 22.03.2019 ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարոյանը

Անդամներ՝ Վ. Ավետիսյանը
Ա. Գաբրիելյանը
Հ Հակոբովը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը

<u>Հանձնաժողովը արձանագրեց</u>

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար ավտոմեքենաների ձեռքերման նպատակով 15.03.2019 էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի ս.թ. մարտի 22-ին, ժամը 12.00-ին:

2. **Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները**

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	Վեկար ՍՊԸ	arman.tadevosyan@autogroup.am	00082994

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

Վեկար ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին /կցվում է/:

4. **Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը**

ՀՀ դրամ

N	Մասնակիցների անվանումը	CPV	1 չափաբաժին՝ ամենագնաց ավտոմեքենա Նախահաշվային գին՝ 22 000 000 ՀՀ դրամ, ներ. ԱԱՀ		
			արժեք	ԱԱՀ	ընդհանուր գումար
1	Վեկար ՍՊԸ	34111160/1	17 666 667	3 533 333	21 200 000

5. Հանձնաժողովը որոշեց

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետով Վեկար ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և Վեկար ՍՊԸ –ին 1 չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ Վեկար ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջել սույն արձանագրության 5.1 կետի ա) պարբերությամբ նշված չափաբաժիններով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 28.03.2019 ներկայացնել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիրը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.4 Գնահատման նիստը տեղի կունենա որակավորման փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ա. Գաբրիելյան

_____ Հ. Հակոբով

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան